ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՎԱԽ (ՀԿ)
SPECIAL TOPIC: FEAR (OT)

I. Գրառումներ Ծննդոց 22:12-ից՝

Այս տերմինը (BDB 431, KB 432) հաճախ է հանդիպում ՀԿ-ում երկու իմաստով: Այն կարող է նշանակել «վախ» (տես՝ Ծննդ.3:10, 18:15, 20:8, 28:17, 32:7, 42:35, 43:18), սակայն որոշակի համատեքստում այն փոխանցում է «երկյուղ», «հարգանք» կամ «պատիվ» իմաստը, երբ բնութագրում է մարդու վերաբերմունքը Աստծո նկատմամբ: Ուշադրություն դարձրեք հետևյալ տեքստերին՝ Ծննդ.42:18, Ելից 1:17, 9:30, 18:21, Ղևտ.19:14, 32, 25:17, 36, 43, 2 Օրինաց 6:2,24, 10:12,20, 14:23, 17:19, 25:18, 28:58, 31:12-13, Սաղմ.33:8: Այս «վախը» պետք է հանգեցնի երկրպագության և հնազանդության (տես՝ Ելից 20:20, 2 Օր.6:13,24, տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ.ՊԱՀԵԼ</u>): Սա ապրելակերպ հանդիսացող փոխհարաբերություն է, այլ ոչ թե առանձնացված դեպքերի, վայրերի, կանոնների կամ օրենքների մի շարան: Հնազանդությունը բխում է սիրուց և հարգանքից, ոչ թե հատուցման վախից: Անհնազանդությունը հիմնականում սիրո դեմ է, ինչպես նաև օրենքի: Մարդու փոխհարաբերություն Աստծո հետ դառնում է կյանքի առաջնահերթություն: Այն, որ «Աբրահամը հավատաց Աստծուն» (Ծննդ. 15:56) արտահայտվեց նրա կյանքում իր գործերի միջոցով Ծննդոց 22-ում:

II. Գրառումներ Երեմիա 1:8-ից՝

ՅԱՀՎԵՆ «մի՛ վախեցիր» խոսքը հաճախ կրկնվող ուղերձ է Իր ծառաներին՝

1. Աբրահամին՝ Ծննդ. 15:1
2. Իսահակին՝ Ծննդ. 26:24
3. Մովսեսին՝ Թվոց 21:34, 2 Օրինաց 3:2,22
4. Հեսուին՝ Հեսու 1:5-9, 8:1, 10:8
5. Գեդեոնին՝ Դատ. 6:8-10
6. Սողոմոնին՝ 1 Մնաց. 28:20
7. Եսայուն՝ Ես. 8:12-15
8. Իսրայել ազգին՝ Ես. 41:10, 13, 14, 43:1,5, 44:2, 54:4
9. Դանիելին՝ Դան. 10:12,19
10. Մարիամին՝ Ղուկաս 1:30
11. Սիմոնին՝ Ղուկաս 5:16
12. Պողոսին՝ Գործք 27:24
13. Հովհաննեսին՝ Հայտն. 1:17

III. Գրառումներ Եսայի 41:10-ից՝

Սա շատ տարածված խոսք է ՅԱՀՎԵԻ կողմից Իր ժողովրդին (տես՝ Ես.41:13, 14, 43:1,5, 44:2,8, 51:7, 12, 54:4,14): Ուշադրություն դարձրե՛ք, թե ինչու պետք է նրանք <u>չվախենան:</u>

1. ՅԱՀՎԵՆ անձամբ նրանց հետ է (այսինքն՝ Սաղմ. 23:4)
2. ՅԱՀՎԵՆ նրանց ուխտի Աստվածն է (այսինքն՝ Ծննդ. 15:1, Ելից 14:13, Դատ. 6:23, Ես. 41:10)
3. Նա նրանց զորացնելու է
4. Նա նրանց օգնելու է (Ես. 41:10, 14)
5. Նա նրանց բարձրացնելու է (Ես. 41:10,13)
6. բոլոր այն մարդիկ, ովքեր հակառակվում են նրանց՝
   ա. ամոթահար են լինելու
   բ. անպատիվ են լինելու
   գ. ոչնչանալու են (Ես. 41:11-12)
   դ. կորչելու են

IV. **Հեսու 4:14 «ՏԵՐԸ ամբողջ Իսրայելի առաջ Հեսուին բարձրացրեց»** Այս ԲԱՑԸ (BDB 152, KB 178, *Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ կիրառվել է Հեսու 3:7-ում՝ մատնանշելով հենց այս գործընթացը):

NASB, JPSOA	**«ակնածեցին»**
LXX, NKJV, Peshitta	**«վախեցան»**
NRSV	**«երկյուղեցին»**
TEV	**«պատվեցին»**
NJB	**«հարգեցին»**
REB	**«մեծարեցին»**

«Վախի» (BDB431, KB 432) նշանակությունը տեսնելու համար սա Աստվածաշնչում լավագույն համարներից մեկն է: Այն գործածվում է «ակնածանքի» կամ «հարգանքի» իմաստով: Սա օգնում է մեզ հասկանալու, թե ինչ է նշանակում այն խոսքը, երբ կարդում ենք, որ պետք է «վախենանք» Աստծուց:

«Ինչպես որ Մովսեսից էին վախենում նրա կյանքի բոլոր օրերում» արտահայտությունը մի փոքր չափազանցություն է, երբ վերանայում ես Մովսեսի առաջնորդության դեմ նրանց տրտունջն ու ապստամբությունը Ելից և Թվոց գրքերում: